

կուզար թափիլ վար, փոքր ծորակէ մը, որու տակ մաքուր աման մը դրուած կ'ըլլար վրան գոցուած :

Այսպէսով շիւհ ոգին կ'առնուէր մինչեւ որ զօրութիւն չմնար :

Այս առջի բերան քաշուածը կը կոչուէր Խըռտան որը դարձեալ կը լեցուէր կաթսային մէջ ու նոյն ձեւով կը թորուէր : Այս անգամ կաթսային մէջ կը լեցնէին նաեւ համեմները, անխօսի, Մէգտէֆի ձիւթ, քաֆուա, նարինջի կեղեւ, եւայլն :

Երկրորդ անգամ քաշուածը կը կոչուէր Բըախըտան Բըախը որ կ'ըլլար չափազանց զօրաւոր ու բարձրաստիճան օղի մը, եւ որը թորեալ կամ անձրեւի ջուրով խառնելով կ'ունենային սովորական օղին :

Մեծ Աղբիւրի ջուրը Սէօյիւտի տակէն դարձուածքով մը բերուած էր Մեծ Կալի ճամբու թորատունը, կամուրջին մօտ, իսկ Վարի Գետի ըրախըլքը սպանդանոցի ճամբուն վրայ էր, Փոս Աղբիւրին մօտ :

Այս օղի հանելու հաստատութիւնները եկեղեցւոյ սեփականութիւններն էին, բայց իբր չարիքի արմատ ոչ ոքի ուշադրութեան առարկայ :

Շատ քիչեր կը մեղադրուէին խման ըլլալու յանցանքով : Ալքոլամոլութիւնը ընկերային չարիք մը չէր եւ ամէն ոք զիտէր իր չափն ու աստիճանը :

Օղիի յաճախորդներն էին թուրքեր ու կառավարական պաշտօնեաներ : Կաշառքի իբր միջոց իր տեղին մեծ դեր է կատարած :

1915ին, Էվէրէկի բանտին մէջ ծեծի տակ կապուտցած ոտքերու վրայ կը կապուէր ծեծուած չամիչ, օղիով շաղուած :

Հայաստանեայց Եկեղեցին նուիրականութիւն մը տուած է խաղողին, Աստուածածնայ տօնին կատարելով խաղողօրհնէքը : Այդ օր խաղողը օրհնուելէ ետք կ'ուտուէր :

Հայրապետական ճառերու ու շարականներու մէջ զովարանուած է որթն ու խաղողը :

Հին հրէական ու քրիստոնէական արարողութեանց մէջ մեծ դեր ունի գինին, որպէս խորհուրդ զոհարերութեան եւ ի քաւութիւն մեղաց :

Անհամար են գինիի, խաղողի եւ ուրախութեան մասին գրուած երգերն ու աստիճանները բայց յաջորդ նիւթին անցնելէ առաջ հարկ սեպեցինք տալ տեղական դրոշմ ունեցող իրական կեանքէ միջազէպեր :

Լուրջ խմող, նարկիլիէ ծխող ու հաճոյասէր անձ մըն էր Տէլլալ Օղլու Յակոբ աղան որ յաճախ պարտքով ձեռք կը բերէր օղին ի գին ինքնազրկումին :